

Հաստատում եմ՝ 30 օգոստոսի 2022 թ.

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի

Գիտական գծով պրոռեկտոր,

փիլիսոփայական գիտությունների դոկտոր,

Ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների թեկնածու,

պրոֆեսոր Ավետիսյան Պարգև Սերգեյի



ԿԱՐՇԻՔ ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Շահանե Յուրիկի Պետրոսյանի «Արդի խոսակցական ֆրանսերենի դարձվածապաշարի ոճիմաստային առանձնահատկությունները /հայերենի զուգադրությամբ/»

Ժ. 02.07 – «Ռոմանագերմանական լեզուներ /ռոմանական լեզուներ/» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին

Դարձվածքը խոսքին կենդանություն հաղորդող կարևորագույն միջոց է: Դարձվածաբանական միավորները ժողովրդի հոգևոր մշակույթի հարստությունն են: Կազմավորվում են երկար դարերի ընթացքում և դրսևորում են տվյալ ժողովրդի պատմական հարուստ կենսափորձը, կյանքը, կենցաղը, աշխարհըմբռնումը և տվյալ լեզվի ազգային ինքնատիպությունը: Դրանք, որպես պատրաստի ձևով խոսքում վերարտադրվող հուզարտահայտչական միավորներ, շարունակ ենթարկվում են տարբեր փոփոխությունների: Այսուհանդերձ, գոյություն ունեն լեզվի զարգացման ընդհանուր օրինաչափություններ, որոնցով պայմանավորված են նաև դարձվածակազմության զարգացման հիմնական միտումները: Ֆրանսերենի դարձվածակազմության հենց այդ միտումների ուսումնասիրությանն է նվիրված Շահանե Պետրոսյանի թեկնածուական ատենախոսությունը:

Թեմայի արդիականությունը պայմանավորված է դարձվածաբանությանն առնչվող խնդիրների նկատմամբ հարաճուն հետաքրքրությամբ, խոսակցական ֆրանսերենի դարձվածապաշարի շարունակական համալրման փաստով, նրա հիմնական առանձնահատկությունների բացահայտման անհրաժեշտությամբ:

Ատենախոսությունը բաղկացած է երեք գլուխներից: Առաջին գլխում ներկայացված են «դարձվածաբանական միավոր» հասկացության էությունը և տարատեսակները, վերջիններիս իմաստային և գործառական բնութագրերը, տարբերություններն ու ընդհանրությունները: Երկրորդ գլուխն աստենախոսը նվիրել է խոսակցական դարձվածքների դասակարգմանը, դրանց ներքին ձևին, պատճառաբանվածությանը, դարձվածային մենիմաստության և բազմիմաստության խնդիրներին: Երրորդ գլխում Շ. Պետրոսյանն անդրադարձել է խոսակցական ֆրանսերենի դարձվածքների պատկերային նկարագրին, դրանցում առկա բանադարձումներին ու դարձույթներին, դրանց ոճահնարային բազմապիստությանը: Ատենախոսության մեջ կատարված գիտական վերլուծությունն ամփոփված է եզրակացությունների մեջ: Վերջում բերվում է օգտագործված մատենագիտական ցանկն ու շուրջ հազար ֆրանսերեն դարձվածք ներկայացնող հավելված: Ուրեմն, կարող ենք արձանագրել, որ աշխատանքն իր ծավալով ու կառուցվածքով համապատասխանում է ՀՀ-ում թեկնածուական աստենախոսություններին ներկայացվող պահանջներին:

Ատենախոսի առջև ծառայել է դժվարին խնդիր, այն է՝ ճիշտ կողմնորոշվել դարձվածային տարաբնույթ գուգաձևությունների գնահատման հարցում, սահմանազատել մերժելին ու անընդունելին՝ նպաստելով վերջինիս կանոնարկմանը: Ի պատիվ աստենախոսի, պետք է նշել, որ նա գրեթե միշտ ճիշտ լուծում է տվել նշյալ հարցերին՝ հանդես բերելով նուրբ դիտողականություն, կայունացած դրույթները նորովի գնահատելու կարողություն: Ավելին, երևույթներն ընդհանուր առմամբ ներկայացնելով իրենց համակարգային ամբողջության մեջ, նա հատկապես կանգ է առել գործնական նշանակություն ունեցող իրակությունների վրա՝ դրանով ապահովելով աշխատանքի գիտական պատշաճ մակարդակը:

Ուրախալի է, որ խնդիրների լուծումն ընթանում է հայոց լեզվի հետ լայն գուգադրության դիտվածքում:

Ուշագրավ է, որ հեղինակն անդրադարձ է կատարել ոչ միայն ֆրանսիացի և ռուս /ժ. Բեռնար, Պ. Գիրո, Ա. Սովաժո, Ա. Ռեյ, Վ. Գակ, Զ. Լևիտ, Գ. Սոկոլովա և այլն/, այլև հայ լեզվաբանների տեսակետներին /Ա. Այտրնեան, Պ. Բեդիրյան, Ա. Նազարյան և այլն/, որոնց խոսքը դարձվածաբանության մեջ նույնպես ծանրակշիռ է:

Այսպիսով Շ. Պետրոսյանի թեկնածուական ատենախոսությունն ընդհանուր առմամբ հաջողված աշխատանք է, սակայն գուրկ չէ թերություններից, թեպետ դրանք մասնակի բնույթ ունեն, ուստի և չեն ստվերում մեկնաբանված հարցերի գիտական արժեքը: Այսուհանդերձ, նշենք դրանց հետ կապված մի քանի նկատառում.

1. Ատենախոսության ուսումնասիրության առարկան արդի ֆրանսերենի խոսակցական դարձվածքների ուսումնասիրությունն է իր ոճիմաստային առանձնահատկություններով, փաստական նյութը՝ զանազան բառարաններից և ֆրանսիական գեղարվեստական գրականության XIX-XX դարերի 50 անուն ստեղծագործություններից քաղված 1028 խոսակցական դարձվածքները: Սակայն, տեղին է հիշել, որ արդի ֆրանսերենը, ըստ Նազարյանի, ընդգրկում է նաև ժամանակակից ֆրանսերենը: Սա նշանակում է, որ հեղինակի ուշադրությունից դուրս է մնացել XXI դարասկիզբն ընդգրկող ժամանակաշրջանը: Այնինչ, ֆրանսերենի խոսակցական ոճին բնորոշ այս երևույթն ավելի ճիշտ կլիներ ուսումնասիրել ժամանակակից գրողների ստեղծագործություններից և մամուլից վերցված նյութի հիման վրա: Այդ դեպքում, մեր կարծիքով, կսեծանար ատենախոսության տեսական, և ամենակարևորը՝ գործնական արժեքը, ինչը յուրաքանչյուր աշխատության առաջնային նպատակն է:

2. Ատենախոսությունը եզրափակող գրականության ցանկում ներառված են ոչ միայն մայրենի, այլև օտարալեզու, մասնավորապես ռուսալեզու և ֆրանսալեզու աշխատություններ, որտեղից վերցված շատ օրինակներ վերլուծվել են ատենախոսության մեջ դարձվածաբանությանն առնչվող այս կամ այն երևույթը քննելիս: Այսուհանդերձ, այդ ցանկում չափազանց քիչ են 2000 թվականից հետո, առավել ևս՝ վերջին տասը տարում հրատարակված աշխատությունները, ինչը մեր կարծիքով, լուրջ բացթողում է:

3. Ատենախոսությունը գրված է գիտական պատշաճ լեզվով, սակայն կան որոշ վրիպակներ, օրինակ՝ էջ 4-ում կարդում ենք Զ. Լևիտ, փոխանակ՝ Զ. Լևիտ: Ակնհայտ է, որ խոսքը խորհրդային հայտնի լեզվաբան Զիգֆրիդ Նատանովիչ Լևիտի մասին է: Էջ

33-ում il y a de l'eau dans le gaz դարձվածքը բառացի թարգմանված է՝ ջրի մեջ գազ կա, փոխանակ՝ գազի մեջ ջուր կա և այլն:

Հարկ է նշել, որ Շահանե Յուրիկի Պետրոսյանի հրապարակած հոդվածներն ու սեղմագիրը լիովին արտացոլում են գրախոսության ներկայացված ատենախոսության հիմնական բովանդակությունը, իսկ ատենախոսությունն իր ընդհանուր գիտական մակարդակով, արդիականությամբ, գիտական նորույթով և տեսագործական արժեքով համապատասխանում է թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին:

Վերոնշվածը թույլ է տալիս միջնորդել ԵՊՀ գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհրդի առաջ՝ Շահանե Յուրիկի Պետրոսյանին շնորհելու բանասիրական գիտությունների թեկնածուի հայցվող աստիճանը Ժ.02.07 «Ռոմանագերմանական լեզուներ /ռոմանական լեզուներ/» մասնագիտության գծով:

Գրախոսականը քննարկվել և հաստատվել է Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարանի լեզվի տեսության և միջմշակութային հաղորդակցության ամբիոնի 2022 թվականի օգոստոսի 30-ին կայացած ՈՒ նիստում:

Ատենախոսության քննարկմանը ներկա էին Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարանի լեզվի տեսության և միջմշակութային հաղորդակցության ամբիոնի հետևյալ անդամները՝ բ.գ.դ., պրոֆեսոր Կ. Մատինյանը, մ.գ.դ., պրոֆեսոր Ի. Կարապետյանը, բ.գ.դ., պրոֆեսոր Ա. Սիմոնյանը, բ.գ.դ., դոցենտ Ս. Սարինյանը, բ.գ.թ., դոցենտ Ն. Թովմասյանը, բ.գ.թ., դոցենտ Ս. Թումանյանը և ուրիշներ:

Առաջատար կազմակերպություն՝
Ռուս-Հայկական (Սլավոնական)
համալսարանի լեզվի տեսության և
միջմշակութային հաղորդակցության
ամբիոնի վարիչ,
բ.գ.դ., պրոֆեսոր՝

Հաստատում եմ՝ 30 օգոստոսի 2022թ.

Գիտքարտուղար,
բ.գ.թ.



Ա. Ա. Սիմոնյան

Ռ. Ս. Կասաբարովա